ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 մայիսի 2015 թվականի **թիվ 6** քաղ. Մոսկվա

Պետական սահմանի ղրղզա-ղազախական հատվածում սանիտարակարանտինային, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) վերացման մասին

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Վերացնել պետական սահմանի ղրղզա-ղազախական հատվածում սանիտարակարանտինային, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը):

2. Սույն Որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի «Անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական հսկողության համակարգի գնահատման արդյունքները հավանության արժանացնելու մասին» որոշումն ուժի մեջ մտնելու, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակիցների եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների՝ սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) համակարգին ծանոթանալու օրվանից, սակայն ոչ շուտ, քան «Ղրղզստանի

Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**